

գեր: Նախ՝ անոր մէջ չեն մտնէր բոլոր պետութիւնները: Ռուսաստանը, Թիւրքիան դուրս կը մնան: Գուրս կը մնայ Հիւս. Ամերիկան, որու ներկայութիւնը թերեւս բաւ էր ընդհանուր խաղաղութիւնը ապահովելու: Ան պիտի մտնէ, անտարակոյս, դուրս ոչ հետու ապագային, երբ հանրապետական կուսակցութիւնը Ամերիկայում տեղի պիտի տայ դէմոկրատներուն, Վուտքո Ուելսոնի կուսակցութեան: Բայց առայժմ ան յամառօրէն կը մերժէ իր մեծ նախագահի մեծ զաղափարը:

Եւ այդ շարք մը պատճառներով, Ազգերու Լիգան կը մնայ կէս-անդամալոյժ մարմին մը: Նա չունի իր ձեռքը անհրաժեշտ Ֆիլիքսական ոյժ — միջազգային բանակ մը — իր վճիռները միշտ ու ամէն տեղ յարգել տալու: Երբեմն երբեմն նա կը յաջողի սոսկ բարոյական իր հեղինակութեամբ լուծելու այս կամ այն կնճիռ. այդպէս, օրինակ, Վերին Սիլեզիայ ծանօթ վճիռը Գերմանիոյ եւ Լեհաստանի միջև, յոյն-բուլղարական ընդհարումը, որ քիչ կը մնար ծաւալուէր ու վերստին հրդեհէր Բալկանները... Բայց երբ ոեւէ ծանր վէճի մէջ կը խառնուի մեծ պետութիւն մը, Ժընէվի Մարմինը իսկոյն կը մատնէ իր անկարողութիւնը: Այդպէս եղաւ յոյն-իտալական ընդհարման միջոցին, երբ Իտալիան անտես առաւ Ազգերու Լիգայի առաջարկները՝ խաղաղ ձեւով լուծելու հարցը եւ զնաց ուժակոծելու Կորֆու կղզին:

Ուշագրաւ է, որ Փաշիստական Իտալիան շատ ալ բարեկամ չէ Ժընէվի Հաստատու-

թեան, զոր Անգլիան եւ Ֆրանսան, ընդհակառակը, յանձին իրենց մեծագոյն պետական գործիչներուն — Ազգութի, Մակդոնալտ, Լորտ Գրէյ, Լորտ Բօթերթ Սէսիլ, Լոյս Ջօրջ, Չէմբըրլէն, Բոլաուին, Լէոն Բուրժուա, Բրիտան, Հերրիօ եւայլն — սկզբէն ի վեր խանդավառութեամբ պաշտպաներ են ու քաջալերել: Իտալիան կարծէք թէ կ'անդամակցի միայն ահամայ: Նա չուզեր կապուիլ, կաշկանդուիլ Լիգայի դրութեամբ, որովհետեւ նա ըստ երեւոյթին տարբեր ծրագիրներ ունի...

Եւ երբ կը քննուէր Ժընէվի պրոտոկոլը Մակդոնալտի ու Հերրիոյի ներկայութեամբ, երբ Անգլիա, Ֆրանսա, Բելգիա, Լեհաստան, Չեխոսլովակիա եւ բազմաթիւ այլ պետութիւններ կը պարտաւորուէին լուծել բոլոր ծագելիք վէճերը իրաւարարութեան միջոցով եւ Ազգերու Լիգայի ձեռքով, դարձեալ Իտալիան էր, որ Շանցերի բերնով առարկութիւններ հանեց, ըսելով, որ Լիգայի հին կանոնադրութիւնը բաւ է արդէն, եւ որ հարկ չկայ նոր, աւելի ուժեղ երաշխիքներ ստեղծելու Եւրոպայի խաղաղութիւնը ապահովելու համար...

Դեռ, ուրեմն, շատ հետու ենք բաղձալի խաղաղութենէն, դեռ Եւրոպան — կենտրոնականն ու արեւելեանը — թատր է հակամարտութեան ու ատելութեան, որվանչի ձգտումներու եւ ազգերու խուլ բախումներու: Դեռ չենք խօսում Ասիայի, Աֆրիկայի, Ամերիկայի մասին...

(Վերջը յաջորդով)

